ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 109.4%, 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.6%, իսկ 2020թ. հունվար-ապրիլին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 98.9%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 754 մլրդ 688.5 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 103.9 և 169.5 մլրդ դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 81 մլրդ 256.3 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 11.9 և 27.2 մլրդ դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 1 տրլ 86 մլրդ 599.3 մլն.դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 167.7 և 270.5 մլրդ դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 698 մլրդ 178.7 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 147.2 և 112.7 մլրդ դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 102.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.9%-ի և 104.2%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 109.0%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 120.3%-ի և 78.1%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 107.8%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.8%-ի և 91.4%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 123.5%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 97.1%-ի և 100.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-ապրիլին կազմել է 197 մլրդ 548.1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 17.2 և 81.8 մրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-ապրիլին կազմել է 428 մլրդ 21.4 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 62 և 57.2 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 121 մլրդ 224.3 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 23.5 և 29.1 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-ապրիլին կազմել է 7 մլրդ 894.7 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 120.1 մլն և 1 մլրդ 306.5 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 87.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.8%-ի և 127.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 110.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.1%-ի և 98.3%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 101.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.7%-ի և 105.9%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 106.8%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.8%-ի և 80.8%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 83 մլրդ 322.9 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.95 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 68.5 մլրդ դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 126 մլրդ 430.6 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 26.6 և 37.7 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 194 մլրդ 76,5 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 38.7 և 40.1 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին ին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 104.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 62.6%-ի և 107.2%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 126.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.5%-ի և 105.8%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 119.8%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.2%-ի և 113.7%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-ապրիլին 2021թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 107.4%, 2021թ. հունվար-ապրիլին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.4%, 2020թ. հունվար-ապրիլին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.1%: ՍԳԻ-ն 2022թ. ապրիլին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 105.8%, 2021թ. ապրիլին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 105.1%, 2020թ. ապրիլին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 102.6%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 24 մլրդ 374 մլն դրամ, ինչը 207.8 մլրդ դրամով կամ 16.9%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 126.2 մլրդ դրամով կամ 14%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. ապրիլի դրությամբ կազմել է 80438 մարդ, ինչը 9990 մարդով կամ 11%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5442 մարդով կամ 6.3%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. ապրիլի դրությամբ կազմել է 55621 մարդ, ինչը 7090 մարդով կամ 11.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5512 մարդով կամ 9%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինասավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 2 մլրդ 907 մլն դոլար, ինչը 735 մլն դոլարով կամ 33.8%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 882.3 մլն դոլարով կամ 43.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-ապրիլին կազմել է -855.6 մլն դոլար, ինչը 322.6 մլն դոլարով կամ 60.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և234.3 մլն դոլարով կամ 37.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 1 մլրդ 25.7 մլն դոլար, ինչը 206.2 մլն դոլարով կամ 25.2%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 324 մլն դոլարով կամ 46.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 1 մլրդ 881.3 մլն դոլար, ինչը 528.8 մլն դոլարով կամ 39.1% -ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 558.3 մլն դոլարով կամ 42.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-ապրիլին կազմել է 213858 դրամ, ինչը 18883 դրամով կամ 9.7%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 25440 դրամով կամ 13.5%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 55 մլրդ 703.5 մլն դրամ, ընդ որում, ներքին աղլուրների հաշվին ֆինանսավորումը՝ -14,861.5 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -40,842 մլն դրամ: 2021թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 52 մլրդ 235.7 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -258 մլրդ 863.2 մլն և 311 մլրդ 98.9 մլն դրամ: 2020թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 18 մլրդ 83.3 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 30 մլրդ 540.9 մլն և -36 մլրդ 624.2 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ